

# ՄԻՈՒԹԻՒՆ

## ՕՌԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ ԳԱՂԱՓԱՐԻ

Ե. ՏԱՐԻ

ԱՅԻՆՔ

1900

ԴԵԿՏԵՄԲԵՐ

ԹԻՒ 43

### ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄ

Ազգի մը կամ ժողովրդի մը մէջ արծարծուած ո՛ր է գաղափար մը, երբ օգտակար ու արդիւնաբեր ըլլալու բնութիւնը ունի, անոր յաջողութիւնն ու իրականացումը եթէ ոչ անմիջապէս, գէթ տարիներու ընթացքին մէջ վաղ կամ անագան կը տեսնուի:

Միութեան գոյութեամբ հարցը, որ հայերուս համար Արեւելեան խնդիր դարձած ամբողջ չորս տարիներէ հետէ վիճաբանութեան ենթարկուած հրապարակի վրայ կը ծեծուէր, հայ յեղափոխական կուսակցութեանց վարիչներու անհայտ քաղաքականութեան հետեւանքը ցարդ գործնական քայլ մը առնուած չէր: Գէպի իրականացումը, հետեւաբար ամենքս ալ իրաւունք ունէինք պահ մը երկմտիլ անոր յաջողութեան մասին: Իսկ այսօր ուրախութեամբ կը տեսնենք որ արտասահմանեան հայ գաղութներու մէջ գաղափարապէս շարժում մը սկսած է:

Հայրենասիրական ամեն կարգի ձեռնարկներու մէջ առաջին փութկոտութիւնը ցոյց տուաւ կարելի է նկատել ամերիկեան հայ գաղութը, որ միշտ իր նիւթական և բարոյական ոյժով կը ձգտի իր տարաբախդ ազգի բազմադիմ վերքերու սպիղանի ըլլալ:

Լօվրէնսի ոչ-կուսակցական հայ երկրորդականութիւնը՝ հրապարակային ժողով մը գումարելով կազմած են 70 անդամներէ բաղկացեալ Միութիւն մը. որ նպատակ պիտի ունենայ Միութեան գաղափարի իրականացման համար քննարկելու և անոր դիւրին միջոցները գտնելու: Միեւնոյն ժամանակ կուսակցութեանց հետ բանակցութեան մտնելով անոնց աջակցութիւնը պիտի խնդրէ այս ազգօգուտ ձեռնարկին մէջ:

Փափաքելի էր որ կուսակցական մեր յարգելի հայրենակիցները ազատամտօրէն ոյժ տային հանրային նպատամատոյց այս մեծ գործին, իթէ համոզուած ալ են աս անհերքելի ճամբարութեան առանց Միութեան չկայ փրկութիւն: Ազատութիւնը յեղափոխութեամբ և յեղափոխութիւնը միութեամբ և համերաշխ գործունէութեամբ կը լինի. սխալուած չենք ըլլար ըսել թէ Միութեան հարցն այսօր հայերուս օրուան ամենակարևոր խնդիրը նկատուելու է: Արտասահմանեան հայ մամուլը և աշխարհիս չորս կողմը ցրուած բոլոր հայերս՝ պահ մը այս կենսական հարցով զբաղելու ենք: Գրադարաններ հաստատել, դպրոցներ հիմնել, զանազան անպէտ տեղեր ափ մը ժողովրդի համար մատուցելու հաստատել երկրորդական խնդիրներ են, նախ պէտք է ուսելու հաց ձարել, բնակութեան համար տուն շինել և, պա վարդապետ համար դպրոցներ, թան-

գարաններ ու թատրոններ հիմնել: Փոխանակ օտար հողի վրայ այսօրինակ ազգ. հաստատութեանց ոյժ տալու, նոյն իսկ մեր ունեցած եկեղեցիներու, վանքերու թանկագին դարձերն ալ ծախելով նիւթական ոյժ մը գոյացնելու և զայն յատկացնելու ենք ազգային անկասկածեան Մեծ Գործին, ասով միայն կը յուսանք իբրեւ հայ Հայաստանի մէջ մեր գոյութիւնը պահպանելու: Շատեր պիտի ըսեն մեզ թէ՛ անոնք ալ ծախելով զեղծանոյններու կոկորդն անցնելու է. ո՛չ, մեր պահանջած միութիւնը այնքան հաստատուն հիմերու վրայ պիտի դրուի, որ երբեք կարելի չպիտի ըլլայ ամենափոքր զեղծում մը տեղի ունենալ:

Այս հիմնական միութեան իրականացումը փութեցնելու միակ միջոցը, հին և նոր-Հնչակեան, Դաշնակցական կուսակցութեանց ազգասիրութեամբ հետեւողները՝ պահ մը անձնական կիրքերը մի կողմ թողլով, Հնչակեանի և Դաշնակցականի խտիր չի դրնելով յանուն հայ յեղափոխութեան մօտենան իրարու և միութեան յաջողութեան մասին խորհրդակցելէ յետոյ, իրենց որոշումները չորսերական յայտարարութիւններով հազորդեն իրենց պատկանած կուսակցութեան կեդրոնի և հայ հասարակութեան:

Մասնաւորապէս՝ ամերիկացի հին և նոր Հնչակեան ու Դաշնակցական մեր յարգելի հայրենակիցներու վրայ մեծ հաւատք ունինք, որ ինչպէս Թուրքիոյ երբ մանգաղն ի ձեռին վայրենի խուժանի հետ համերաշխութեամբ կը մտնէ հայ գիւղերը առանց Հնչակեանի և Դաշնակցականի խտրութիւն գնելու. առ հասարակ կին և տղայ սրէ կ'անցնէ, նոյն համերաշխութեամբ առանց կուսակցական խտրութեան իրենք ալ իբր լուսաւորեալ ազգի մը պարտաճանաչ զաւակները պիտի փութան միութեան կազմակերպութեանը:

Ամերիկայի ոչ-կուսակցական հայերու մէջ սկսած գաղափարական շարժումը երբ ընդհանրանայ հայաբնակ զանազան երկիրներու մէջ, մօտալուտ ժամանակի մէջ պիտի տեսնենք մեր ծրագիրներու իրագործումը:

#### ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

. . . Խմբագիր «Միութիւն»-ի.

Հօրէնսի «ոչ-կուսակցական» ժողովուրդս տեսնելով որ, սկիզբէն մինչև ցարդ անմիաբանութիւնը եղած է մեր Ազգին տունը քանդողը, և փոխանակ անցեալէն օրինակ առնելու, կրկին նոյն անմիաբանութիւնն է որ ներկայիս մէջ անվերջ կը շարունակուի, որուն վնասները տուժողն կրկին ժողովուրդն եղած է:

Ասոնք ի նկատի առնելով հոկտ. 21ին հը-

Բաժնեգնի փոխարէն ամեն երկրէ կընդունուի նամակադրոյժ (փուլ):

Ամեն անոնք՝ որ բաժանորդ կը գրուին և առաւաւելն երեք ամիսէն չեն վճարեր չորրորդ ամիսը թերթ չպիտի ստանան:

Բազմապայի ժողով մը տեղի ունեցաւ և իսկոյն 70 անդամով ժողովրդային միութիւն մը կազմակերպուեցաւ. նպատակ ունենալով միութեան օգտաշատ գաղափարի իրականացման դիւրին միջոցները որոնել և պահանջել կուսակցականներէ որ իրենք ևս ոյժ տան այս օգտակար ձեռնարկին, ու ազգովին ձեռք ձեռքի տալով ներկայ տաժանելի վիճակի բարեփոխման և օգտաշարութեան ամեն միջոցներու վրայ խորհիլ:

. . . Խմբագիր, հաճեցէք Ձեր պատուական թերթին մէջ անկիւն մը շնորհել սոյն երկրորդին:

Ի դիմաց

Ոչ-կուսակցական կազմակերպութեան  
Ատենադպիր Յ. Ն. Ատենապետ Կ. Ա.  
1900 Նոյեմբեր 3 Լօրէնս մէս

### ՎԵՐԵԳԱ

Տամատ Մահմուտ Փաշա հաղթեցէրինին նէշը իթտիրմիշ օլտուղի պիր վէրգատա՝ էրմէնիլէրին ժէօն Թիւրքիէ իլէ իտթիֆաթ իթմէֆիլիթ վիլայէ պուլուրիտօր:

Մահմուտ Փաշա հաղթեցէրինին վաթանտալարը հազգընտա պէսլէմէթաէ օլտուղի հիսսի մուհապէթտէն տօլայի, քէնտիլէրինէ թէշէքքիւր օլտուրը իսէտէ, շու թէքիֆի ալիսինն գարշու պիր գաշ սէօզ սէօլլէմէշի վտղիֆէտէն ատտ իտէրիմ:

Էվլէլա՝ Աւրոպաճա ժէօն Թիւրք նամընը ալան ֆըրգայի ահրար քի վաթանը միլլէթինին սաատէթ վէ սէլամէթինի արդու իտէնլէրտիր, էվլէլէ պիր գըսմը միւհիմմի ալազէյի իսթիմատլէրինի ճիհանէ իսազ էթմիշլէր իտի, հայֆաթի գըսմի ահրար աքսամի նամիւթանահիլէ ինգիսամ իթտիքտէն սարֆը նազար էֆքեարի ումուսիլէտէ ճայիլը օլան ճէվլէրի հիւրիլէթի իսթիհալ իտէմէմէթ իլէ պէրապէր, փէրիլ թալիլ վէ իգպալի միլլէթիմիզտէն աղլայարաթ իւզ չէվիլիլէկէ սէպէպ օլտուլար:

Էվլէլի էմիրտէ ժէօն Թիւրքիւր նամի իլէ մէյտանէ աթըլանլարըն հարէքէթի իլէ իսթիհալիթտիլէրի սէմէրաթի թէտգիլ իտէլիմ:

Մէլալիմի ումուսիլը քի հէր պիր իլէ վուսուլ իթտիֆաթի ումուսի վէ ճիտաի վէ սապիթ պիր մէսլէթ թաղիպի իլէ հասըլ օլուր, Հալպուքի պիրինճի գըսմի թէշքիլ իտէն Մուրատ պէյ վէ ըրիֆէգասի էվլէլա էնզարի տիգգաթի ումուսիլէ քէնտիլէրինէ ճէլպ իթմիլլէր իտի իսէ տէ մէլաթէսսիլիլ իթթիֆաթ վէ իդտիհաթ վէ իսուսուսի իլէ շէլէֆ վէ մէզիլէթի ինսանիլէտէն օլան սէպաթտէ տէվամ իտէմէմէլլէրինէ կէօրէ հարէքեաթ վէ նէշըլյաթի վազալլէրի էֆրատի միլլէթտէն պիր չօք զէվաթըն մահֆը վէ թէպահի իլէ նէթիճէլէտի:

# ՄԱՅՐ ԵՐԿՐԵՆ

\*\*\* Էն ստացանք 51 էջերէ բաղկացեալ երկար յօդուած մը, զոր մի բանի մասերու բաժնելով կը հրատարակենք:

Ա.

Խմբագրութիւն «Միութիւն»ի,

... Թերթիդ առաջարկած Ողբային Համա-գումար ժողովոյ առաջարկին՝ առիթ ընծայեց մեզ հրապարակ իջնել ու հայերուս դառն կա-ցութեան մասին գաղափար մը տալ մեր արտասահմանեան հայրենակիցներու, ընդ որս գաղափարի փոխանակութեամբ թերեւ կարելի դառնայ մեր վիշտերն ամբողջու, մեր ցա-ւերը դարմանելու միջոցները որոնել ու գտնել:

Գրեթէ տասը տարիէ ի վեր է որ հայուն կեանքը Հայաստանի մէջ անտանելի դար-ձած է.— Օսմ. ամբարշտ կառավարութեան բազմադիմի ճնշումները, քիւրտ ու թիւրք վայրերի գալերու ի դորձ դրած եղեռնա-գործութիւններն ու հարստահարութիւն-ները իրենց գազաթնախտին հասած. ան-պաշտպան հայերու կեանքը: այնքան դառ-նացուցած է որ, ամեն ուրեք «անաթէ-մայի» անէծքներ կը կարգացունեն նոյն վայր-կենիւն, որ սկսեալ է իրենց կեանքի գոյու-թիւնը: Կարծես այս բոլոր խժոճութիւններն բաւական չէին հալածել զմեզ, միւս կողմէ ցուրտն ու նոթութիւնը ստիպած է խեղճ հայուն քաշուիլ իր կիսաւեր խրճիթին մէջ ու ողբալ իր դառն վիճակը: Իրաց այս սրտա-ճմլիկ կացութեան մէջ մերթ ընդ մերթ չըջա-կայ գիւղերէ կը լսուին աւարառի և կո-տորածի խուլ ձայներ, հեռաւարտ սարսա-փը կ'ընդհանրանայ և հայ գիւղացին չհա-մարձակիր քաղաք կը թափ իր պէտքերը հո-գալու միջոցները ձեռք բերել: Փաստերով խօսելու համար այս անհրեակայի թշուա-ռութեան մի նմոյշը ընթերցողին ներկայա-ցնել աւելորդ չեմ համարիր:

Առևտրական գործերուս համար հարկ ե-ղաւ... քաղաքը ճամբորդել, բայց որով-հետեւ մէկ օրէն ժամանել կարելի չէր, բա-րեկամէ մը յանձնարարուած էի... Կիւղը, երբեմն բաւական զիրք ունեցող \* ին տունը անցնել գիշերը: Օրը տարածամած էր ար-գէն և մութը տիրած. հասայ վերջապէս գիւ-ղը, որ 1896ի կոտորածներու ենթարկուելով կէս վիտակ տխուր տեսարան մը կը ներ-կայացներ: Տղու մը առաջնորդութեամբ մը-տայ յանձնարարուած տունը, որ կանթեղի մը պղպղոցով կը լուսաւորուէր. անկիւնը ան-կողնոյ վրայ պատկառելի ծերունի մը երկու փոքրիկ տղայք շուրջը առած՝ համրիչով կը զուարճացնէր որ չի լան. մատուղ աղջիկ մ'ալ ուրիշ: անկողին մը կը պատրաստէր. բարեւելով յանձնարարողին ներկայացուցի. կարգաւ չի գիտնալ յայտնելէն յետոյ նամակս կարդալով ծանօթացուցի ինքզինքս: Պատկառե-լի ծերունին փայտաթու մը ցոյց տալով հրամ-ցուց զիս, երբ նստելու կը պատրաստուէի, դուռը բացուեցաւ ու փայտերով բեռնաւոր-եալ պառաւ կին մը ներս մտաւ. անչափա-հաս որբերու մեծ մայրն էր այն, որ բեռը վար գնելով աղկտուր հառաչանք մը ար-ձակեց ու նստաւ մեզ հետ խօսելու: Հար-սին մէկը թուրքերէն առեւանգուելով՝ բռնի իսլամացած՝ իսկ միւսը քիւրտերու յարձա-

կուժէն սարսափահար մեռած էր: Մեր տխրառիթ խօսակցութեան մանրա-մասնութիւնը չատ երկար կը լինի հոս նկա-րագրիլ. հետեւաբար կը բաւականանամ երկ-տաղով մը վերջացնել: 1895ի կոտորածներէն առաջ բարեկեցիկ վիճակ մը ունեցած է այս ընտանիքը, գիւղացիներու նիւթական և բարոյական մեծ ծառայութիւններ մատու-ցած ըլլալով ամենուն սիրելի դարձած ու համակրութիւններն գրաւած. սակայն 95ի ցոյցին երկու ամուսնացեալ զաւակները վայ-րադ թուրք ամբոխին սրերուն յանձնած, ու իր ստացուածքը անոնց կողմէն յափտո-կուած, վերջին ծայր թշուառութեան մատ-նուած է: Ինչպէս ըսինք, այս ընտանիքը գիւղին մէջ ամեն տեսակետով նշանաւոր գիրք մը գրաւողն եղած է, ալ ընթերցողը թող երեւակայէ թէ այդ գիւղի չքաւոր դա-սակարգը ո՞ր աստիճան թշուառութեան մատ-նուած կը լինի:

Իմ երկամսեայ ճամբորդութեանս մէջ, գրեթէ 30է աւելի հայ գիւղեր այցելեցի, բո-լոր բնակիչներն ալ քիւրտ գալերու միջոցաւ Օսմ. Տէրութեան տգէտ ու մոլի կառավա-րութեան զոհերն եղած են: Այս առիթաւ ա-ռաջին անգամ ըլլալով, կը համարձակիմ իմ ազաւ գաղափարս մեր ազգին երեւելի, այ-սինքն՝ Մեծ-Պետութեանց քաղաքականութեան հմուտ ձեռնհաս ու կարող անդամներու մտա-ծութեան և դատողութեան յանձնել: Խնդրելով անոնցմէ՝ որ եւրոպացի ազաւ քաղաքի մը մէջ ժողով մը գումարին Տաճկահայաստա-նի ազգայնոցս արդի մահաբեր կացութեան դարմանին համար խորհրդակցելով, որո-շումներն անյապազ ի գործ գնելու միջոցները որոնեն: Միևնայն ատեն մեր հայրենասէր, բարեխնամ և անձնուէր Հայրիկը, որ բոլոր ազգայնոցս վստահութիւնը կը վայելէ, մեր կողմէ ընտրեալ իբր առաջնորդ, իր շուրջն հաւաքէ հեռատես, լեզուազէտ և քաղաքա-գէտ բարձր անձնաւորութիւններ և ոչ-քա-ղաքական հանգամանք ունեցող ժողով մը գումարելով Տաճկահայաստանցիներու արդի անտանելի կացութեան մասին տեղեկագիր մը պատրաստելով անձամբ Ձարին ներկայանայ: Իսկ Եւրոպայի մէջ գումարուած ժողովն իր վճռական որոշումները տալէ ետք գիւղանա-գիտական մարմին մը կազմէ և բոլոր Մեծ Տէրութեանց գահիճներու զիմէ: Այս կարգի գործունէութիւններ անպատճառ յաջող հե-տեանք կրնան ունենալ, երբ միութեամբ ու համերաշխութեամբ գործուի: Մենք՝ Տաճկա-հայաստանցիներս դէժ այսպէս հաւատացած ենք, որ եւրոպացի մեր ազգակիցները մե-ծամեծ գործեր կրնան յաջողցնել երբ աշխա-տելու կամք ունենան: Բայց ցաւալի է խոս-տովանիլ թէ մինչև հիմա օգուտ մը չտեսանք և ատոր համար է, որ ամենուրեք հայ յե-ղափոխութեան դէմ տրտունջներ կը լսուին...

## ՆՈՐ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ

ԳՈՐԾԱԾՈՒԱԾ ՆԱՄԱԿԱԳՐՈՇՄԵՐՈՐ

(Timbres-Poste pour collections)

Պատիւ ունինք ծանուցանել հայ հասարա-կութեան մեր նոր գրասենեակը, ուր պատ-րաստ ենք փափաքողներու ամենայն զիւրա-մատչելի գներով հայթայթել ամեն տեսակ նամակադրոշմներ նամանաւանդ հեղինակա-նէր, որոնց մասին աւելի մասնագիտութիւն և ճոխ հաւաքածոյներ ունինք:

Փափաքողը գիմեն հետեւեալ հասցէին,  
**Agop Garabedian et C<sup>ie</sup>**

12 Rue de Stade 12

Athènes (Grèce)

Ժէօն Թիւրքլէրին ըէյիսի սայըմաք լաղըմ կէլէն Մուրատ նամ ըէլիլ՝ պիր գաչ կիւնլիւք զէմգի ֆաշիյէ դամաչ իտէրէք վաթանընն, միլլէթիին մէնֆաթընի պիր չահսը զուլում-քեարըն բահաթի ուղուրունայ ֆէտա էտիւպ պու կիւն Իսթանպուլտ վէֆէգաթ Օսմանլը միլլէթիին նազարի հագարէթի ալթընտա իմ-րարի վագթ իտէեօր:

Շու խապիս՝ վէ ըէլիլէն իսրինէ իղթիֆա իլէ մէյտանէ չըգան պիր չօք Ժէօն Թիւրքին պիրինճի ըըզմէթի եէքտիկէրի ալէհինտէ պու-լունմաք պիրիպիրինի մահֆ իթմէլէ գալըզ-մաք: Իքինճիսի պիր քիւլան գաբմաք իչիւն պիր գաչ հանըմանի մահֆ վէ պէր պաթ իթ-մէք: Իչիւնճիսի վաթանընա գարու քէմալի ըէզալէթ վէ սէֆալէթիէ հիւանէթ իթմէք օլ-տու: Նէթիճէտէ ինթիզար օլունան ֆայտէ եէրինէ գարար գայըմ օլտու:

Էրմէնիլէր՝ նէ Օսմանլը հիւրիւմէթիին մահֆ վէ միննգարիս՝ օլմասընը, նէ տէ վա-թանլարընն աչըր պիր հէօթիւմէթին եէտի իսթիլասընայ կէչմէսիին իսթէր, նէ տէ միւս-թէքիլէն պիր հէօթիւմէթ թէքիլիին արդու իտէր: անճագ ագվամի մէտէնիլէ կիպի հու-գուգ ու մուգատտէթիին մահֆուղիլէ-թիին միլլէթիին սատտէթ վէ ուլմէթիին թէլէպ իտէր:

Պու հագիգէթ իսէ կէրէք Աւրօբա տէօվ-լէթիին նէշտինտէ կէրէք իսէ վաթանտալարի նազարընտա մէյտանի պիտահէթէ չըգմըշտըր:

Էրմէնիլէր՝ պէչիւզ սէնէտէն պէրու թահ-թը թապիլէթի օսմանիլէտէ պուլունմագիլէ իֆթիսար իթիլէր վէ ինէ իտէրլէր: չու միւտտէթի քէսիլէ գտրֆընտա վաթանաւ-լարը օլան Թիւրք վէ Բիւրսլէր իլէ պիր այլէ կիպի իմրարի վագթ իթմիլլէր իսէ տէ, 25 սէնէտէն պէրու քիւպուսի պէլա կիպի միւ-լէթի օսմանիլէտէն պալընա չէօթմիւլ օլան ախլաքըզ մէրհամէթսիլ պիր փատիւհըն պիլ ումում ագվամ վէ միլլէ արասընա սօգ-մուշ օլտուղի ֆիթիլէ վէ ֆէստա սէյիլէսի իլէ հիսսի մէալիտէն պիլ նուսիպ հագիգաթ հալէ էնէպի գալանլար թարաֆընտան էն-գար ումումիլէի ճէլպ իտէճէք սուլէթտէ ահվալի միւլէլիմէ մէյտանէ կէթիլիլտի: Պու հալլէրէ տէյիլ Էրմէնիլէր վէ եախօտ Թիւրք-լէր, գտնն իտէրսէմ ալէմի ինսանիլէթ աղ-լատըր:

Մահմուտ Փաշա հագրէթլէրինին մէյ-տանէ չգարմըշ օլտուլարի ֆիթիլ թէրագգի վէ հիւրիլէթի իլթիւրաք իթմէլէճէք ինսան թէսափուր իտէմէմ: Էրմէնիլէր՝ պու գալմի մաղլում հէմ քէնտիլէր իչիւն հէմ վաթան-աալարը իչիւն իսթիսալի հիւրիլէթ մագ-սատի իլէ մէյտանա աթըլտըլար: Ատալէթ վէ հագգանիլէթի հաթըրնայ կէթիլմէք շա-նընտան օլմայան Խ—օնքեար պիշարէլէրի սէվկիլլի վաթանտալարընա գաթի իթիլտի: Շու գաթիլ իսէ վատի ճէհալէթտէ փուլան օլան վէ Խ—օնքեարըն Ռուոիայա, Ռու-սիանըն հիւնքեարա գարու պաղիճեյի մէն-ֆաթալ ալէթի ֆէսատի օլան քիւրտլէր իտի: Նէթիճէլի քէլամ էֆքեարի հուրիլէթ փեր-վիրանէ ճիւմէտէ պագի վէ գայիմտիլ: ան-ճաք սէպաթ վէ ֆէյլիաթ չարթ տըր: Պինաէն ալէհ իսթիսալի հիւրիլէթ ուղուրընտա մէյ-տանա օլան Ժէօն Թիւրքլէր տալի Էրմէնի-լէրին իւզտէ պէչի գատար ֆէտաքեարլըքտա լպուլունսուլար, ֆիթիլ հիւրիլէթլէրինին ա-սարի ֆէյլիաթըն մէյտանա գոյսուլարտա, իլթիւրաքի վէ մուալէնէթ ճիւմէնին պօր-լատըր:

Մակեդոնացի Թուրք Յեզափոխական մը

# ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՆԵՐԸ

Նկատելով որ, ըստ խմբագրութեանդ յայտարարութեան, Ձեր թերթը անկողմնա-  
հալ է, ուստի կը խնդրենք որ հաճիք Մի-  
ութիւնն ի մէկ անկիւնը հիւրնկալել հե-  
տեւորը:

Վառնա, 26(8) Նոյեմբեր 1900

Միութիւն պառակտելու ամեն կողմէ յուսա-  
հատած՝ այն ժամանակ երբ ներքին զեղ-  
ծումներն, խաչագողութիւններն հետզհետէ  
գաւազնուցիչ կերպով բազմապատկուեցան՝  
կոտորածներէ աւելի այրող...

Պաշտօնական երկիրներէն ծագում առաւ  
«Ռւմ հետ միանանք»-ի հակառակութիւնը,  
խեղդելով ամեն ձայն, ամեն ձգտում, որ հե-  
ղինակաւոր անձերու և ճշմարիտ հայրենա-  
սէրներու բաղձանքն էր միանգամայն Չը  
միացան... և չը թողուցին ալ որ միանան:  
Նոյնն ըրին նաև հակառակողներու չըջնա-  
կիցները՝ հրահանգ տալով ապա՛նդորոնա-  
ցումէ՝ ապակեդրոնացում: Գաղափարի այս  
կռիւը ուժեղ կերպով մղողներ, պաշտօնական  
օականներով և «Շարժում»-ի պէս թերթերով  
սեւեռման արժանացան իբրև մատնիչներ,  
դաւաճաններ, վատեր և այնպալէղներ...

Կռիւը ընդհանրացաւ:

Մի քանի մարդ աւելեցին և ներքին և  
կոյր եւ մասին եր միայն մնացին իրենց  
ուխտին հաւատարիմ: Միւսները բոլորո-  
վին՝ բաժնուեցան ու գացին աշխատակցի և  
օգնութեան հասնիլ անմեղ որբիկներուն: Օրը  
օրին տեղի ունեցաւ 28 սնտուկի և Տիկնանց  
մասնաճիւղի ահագին զեղծումներն ու դողու-  
թիւններն՝ արձագանգ տալով միւս կուսակ-  
ցութիւններուն «Ռւմ հետ միանանք»-ի շեշ-  
տակի հարուածը... և ժողովուրդը յուսահա-  
տեցաւ: Բոխանակ աւելի յոգեւորուելու և իր  
ձեռքով գերակատարները մաքրելու: Ոմանք  
ալ (ողորմելիներ:) ակնապիչ բերանին բաց,  
կսպասէին որ քննիչը դիւթիլ գաւազանի մէկ  
հարուածով ամեն բան պիտի լմնցնէր և գըր-  
դուած մտքերը պիտի հանդարտին: Այսպէս  
համոզուած էին և այսպէս ալ կուգէին հա-  
մոզել ու հաւատացնել իրենց հետ անձնական  
հաշիւ ունեցողներուն, ու մինչև այսօր Մէ-  
սիային գալուն պէս՝ կսպասեն թէ օր մը ան-  
պատճառ պաշտօնական օականին մէջ պիտի  
հրատարակուի 28 սնտուկի և Տիկնանց մաս-  
նաճիւղի հերոսներուն անունները (.)...

Մինչև Ամերիկաները կոկորդին պատուե-  
լու չափ արձագանք տուին թէ երբեք մեղա-  
ւոր չէր Վարդան՝ կամ Գայազատէ Օննիկը: Ու  
մոռցած էին յիշելու թէ՛ դեղադործ Գանար-  
եան, Բաբա-գասպար և Տօթ. Աթաբէկեանց  
երբեք մեղաւորութիւն և մասնակցութիւն  
չունին այդ ծանօթ խնդրոյն մէջ: Ժողո-  
վրդին քիթէն բռնելու ու իրենց հոռէի քարշ  
տալու համար հինաւուրց կեղծիքի և խաբուսիկ  
ձեւակերպութիւններու մէջ մտադրաւ եղող  
հակամիութենական այս խմբակը վերջապէս  
զոյց բարոյականի ուժգին հարուածը, զոր  
վերջնականապէս կը պատռէր ու իր մերկա-  
ցնէր դէպի մութը առաջնորդող իրենց աղուէ-  
սային դիմակը: Սակայն աւելի տոկալու հա-  
մար գոյացած միութեան հոսանքին դէմ,  
պէտք էր դարձանք խորհիլ՝ առանց սակայն  
պրպտկուել իրենց գործունէութեան արդիւնքը  
և զեղծումներու և շահատակութիւններու:

Հարբը, որոնք մահ կսպառնան, և ահա այս  
պատճառաւ աւելի լաւ համարեր են երթալ  
միանալ վախառու Սարգիս Գաբրիէլեաննե-  
րու հետ՝ ժողովրդին պիտուն վրայ աւել-  
ցնելով նաև աւելի ճնշող և քանդող նոր  
փորձանք մըն ալ... այն ալ միայն իրենց  
կաշիին համար քան թէ հայրենիք մը ազա-  
տելու նպատակաւ անսալ և համակերպիլ  
պաշտօնական միութեան:

Իսկ գալով վերակազմեալներուն, որոնց  
կազմակերպութիւնը թէ արտաքին և թէ  
ներքին երեւոյթներով տեսակ մը արշակաւան  
կը ներկայացնէ՝ այս կամ այն կուսակցու-  
թենէ վնասողներով, փախտակաւորներով և  
յեղափոխականութեան հմուտ չեղողներով,  
Արփիարի մը դաւաճան ըլլալը կամ չըլլալը  
հանրային նիւթ ընելով սկսան բուռն պայ-  
քար մը մղել Գալակցութեան դէմ և այս-  
պէսով ժողովրդային հոսանք մը գոյացնել  
դէպի իրենց կեղծողը կազմողներուն տոպ-  
րակը, անխառնաբար արգարացնելով Արփիարի  
հակահայրենասիրական դրութիւնն ու ուղ-  
ղութիւնը, իբրև թէ այդ կազմակերպութեան  
հետեւողներուն առաջին պարտականութիւնն  
եղած ըլլար Ամփիարի մը պաշտպանութիւնը  
յեղափոխական գնդակին դէմ. փոխանակ  
կամակոր սիրով թշուառացած ժողովրդի մը  
ազատագրութեան առջև յանձնառու ըլլալու  
իրենց անձնուիրութեամբ:

Հրապարակի վրայ եղած թէր ու դէմ քն-  
նադատութիւններէն կը հետեւի որ, պա-  
րագաներու և հանգամանքներու բերմամբ,  
անյարմար և անճոռնի կերպով կազմուած  
մարմիններու կամ գործիչներու փոփոխու-  
թիւնները ուրիշ բանի ծառայելու համար չեն  
եղած, բայց միայն մի քանի խաչագողներ  
սնուցանելու և բուռն դերակատարները՝ իրենց  
կաշին ապահովելու համար. և ահա միակ  
այս պատճառաւ է որ ժողովրդէն գոյացած  
հոսանքին մէջէն ընտրողութեամբ առած են  
կոյր եւ մասին եր և ըրած իրենց  
հետեւողներ, ու այսպէսով կուգեն ներկա-  
յացնել իբրև կազմակերպուած հզօր մար-  
միններ (.), հակառակ յեղափոխութեան օ-  
րէնքներուն, ինչպէս է նաև Պաշտօնեան  
երկիրներու հանրածանօթ ներկայացուցչին  
ըրած կազմակերպութիւնները:

Որը որ ըլլայ, երկուքէն մէկը, եթէ օրի-  
նաւոր կազմակերպութիւն մը եղած ըլլար,  
անշուշտ տեղի չպիտի ունենային ահագին  
զեղծումներ, խաչագողութիւններ և ժողովրդին  
յուսահատութեանը պատճառ եղող խայտա-  
ռակութիւններ, և եղածներուն ալ պէտք ե-  
ղած տնօրինութիւնները պիտի ըլլային՝ իբրև  
գաղտնի կառավարութեան մը պէս հսկող  
զօրաւոր մարմին մը արդիւնաբերութիւն:

Սակայն ցաւ է տեսնել որ անվերջանալի  
կերպով տեղի ունեցած այդ ամեն մատու-  
թիւններուն, խաչագողութիւններուն զեղ-  
ծումներուն և ոչ մէկը ընկերային անաշա-  
ղատաւոր մը չեն թարկուելու և յանցա-  
ւորը չպատժուեցաւ: Դերակատարները մնա-  
ցին կրկին իրենց չըջնակին մէջ՝ պաշտ-  
պանուած կոչու ու կոպիտ «եամախ»ներէ, և  
ամեն եղածները հազարումէկ անսակ միջոց-  
ներով և ձեւակերպութիւններով, որոնց մէջ  
առաջին տեղը կը բռնէ եղբայրասպան ոճ-  
րագործութիւնները, խղճեցին ու յետոյ ըս-  
կան «մատնիչ է, դաւաճան է, անձնական  
խնդիր է, անհատական ձայն է» ըսելով  
չէզոքացնել տրտուեցնելու ու բողոքները:

Իրաց այս տխուր խայտառակութիւննե-  
րու հանդէպ Միւսա Չերաղներ, Բաւմաշ-  
եաններ, Ճանկիւլեաններ և ուրիշ ճշմարիտ  
աղգասէրներ տակաւին կսպասեն որ միու-  
թեան հակառակող ամեն դերակատարներ  
իրենց բեռը կապելէն վերջը յօժարին հրա-  
ժեշտի ողջոյնը ալ ու հեռանալ ասպարէ-  
ղէն, և այն ատեն ժողովուրդն ալ բազդի  
բերմամբ միանալով ոյժ տալ ազատութեան  
գործին:

ԶԱՐՈՒՀԻ

## ՍՈՒԼԹԱՆԸ, ՎԻԼՀԷԼՄ ԿԱՅՍՐԸ ԵՒ ԻՍԼԱՄՆԵՐՈՒ ՓՈԲՐ-ԱՍԻԱ ԿԱԶԹԵԼԸ

Կ. Պոլսոյ յոյ գաղթականութեան մէջ կա-  
րեւոր դիրք ունեցող դիւանագիտական պաշ-  
տօնեայ մը՝ տեւոյս «Egypci» թերթին հե-  
տեւալը կը գրէ.

Այսօր առաջին անգամ հրապարակ կը բե-  
բում խնդիր մը, որ թուրք դիւանագէտներու  
ակմբին մէջ ցարդ գաղտնի մնալով ոչ միայն  
իրականութենէ զուրկ չէ, այլ թուրքիոյ  
օրուան հարցը դարձած և արդէն գործադրու-  
թեան ալ սկիռած է: Պալատական բարձր-  
աստիճան թուրք պաշտօնատար մը՝ որ իր  
անսահման ազաւատութեամբ մտերմական  
յարաբերութիւն հաստատած է հետոս, հաճե-  
ցաւ վերապահութեամբ հաղորդել ինձ քաղա-  
քական սա՛ գաղտնիքը: Սուլթանը և զինքը  
չըլլապ տող քաղաքագիտական մարմինը կա-  
տարեւապէս տեղեակ է թէ՛ վերջապէս օր մը,  
թուրքիա՝ եւրոպական սահմանի մէջ իր գե-  
րիշխանութիւնը պիտի կորսնցնէ և գոյու-  
թիւն ունենալու իրաւունքէն պիտի զրկուի.  
Քանի որ վաղ կամ անագան ինչ որ ալ պա-  
պատահի, Արեւելեան խնդիրն իր վերջնական  
լուծումն պիտի ստանայ, առ այս թուրքիա  
խորապէս համոզուած է թէ՛ որքան ձգձգուի  
Արեւելեան խնդիրն, այնքան միայն պիտի  
աւել իր գայութիւնը եւրոպական թուրքիոյ մէջ:

Այս հարցը վիլհելմ կայսեր և Սուլթանի  
միջև խորհրդակցութեան նիւթ դարձած էր  
երկու տարի առաջ, երբ վիլհելմ Պոլս եկած  
էր: Ապտիւլ Համիտ, եւրոպական պետու-  
թեանց քաղաքականութեան մասին խօսելով  
իր մտերմ բարեկամէն խորհուրդ ուղեց,  
թուրքիոյ անորոշ տպագան վտանգի մէջ տես-  
նելը յայտնելով. — Մեծն կայսրը պատասխա-  
նեց թէ՛ արգարե թուրքիոյ գոյութիւնը ըստ  
քաղաքականութեան արդի հանգամանքներուն  
վտանգի տալ ըլլալն անհերքելի մի ճշմար-  
տութիւն է, զոր ձեր վեհափառութիւնը իր  
հեղինակաւոր իմաստութեամբ և հեռատեսու-  
թեամբ նախատեսած է. սակայն ապագայ վր-  
տանգէն խոյս տալու միջոցներ չեն պակսիր,  
Օսմ կայսրութիւնը կանգուն պահելու հա-  
մար, թուրքիա՝ յետ այսու ամեն ջանքի  
գործ դնելու է ընդհ. իսլամութիւնը փոքր-  
Ասիոյ մէջ զետեղել. փոյթ չէ որ մեծամեծ  
ծախիբերու ու զոհողութեանց կարօտի. մանա-  
ւանդ այն երկիրներէն, որոնք թուրքիայէն  
անջատուած են՝ Կիւտէ, Սամուս (Սուսամ)  
Պօսնա, Հէրսէք և Արեւելեան Րուսիոյ  
Նոյն իսկ այն երկիրներէն ալ, որոնք մօտա-  
լուտ ժամանակի մէջ պիտի անջատուին թուր-  
քիայէն: Այդ կողմերու բոլոր իսլամները փոքր  
Ասիոյ մէջ համախմբելէ յետոյ պէտք է ոյժ  
տալ անոնց նիւթական և բարոյական զար-  
գացման, դիւրութիւններ ընծայել մասնաւո-  
րապէս արհեստական, վաճառականական և  
երկրագործա՛ն ճիւղերու առաջդիմութեան:

Այն ատեն միայն պիտի կրնայ թուրքիա իր գոյութիւնը պահպանել և մնալ Փոքր-Ասիոյ մէջ դարձեալ հօր տէրութիւն մը, իրեն մայրաքաղաք ունենալով Զմիւռնիա քաղաքը:

Սուլթանը՝ մեծ ուշադրութեամբ լսեց Վիլհելմի բարեկամական խրատները և վճռականապէս որոշեց հետեւիլ անոր ցոյց տուած բաղադրանքներուն, զոր սկսած է արդէն գործադրել:

Վերջերս հապաւոր կրեցաք թուրքեր Պոլսէն փոխադրուելով Փոքր-Ասիոյ մէջ հաստատուեցան, ուր տեղական իշխանութիւնները Սուլթանի հրամանաւ անոնց բոլոր պէտքերը հոգացին բնակութեան համար տուն, մշակելու համար երկիր, եղ, ոչխար և այլն տալով:

Հաւատացեալներու Փոքր-Ասիա փոխադրուելու գաղափարը ի վերոյ յիշուած բոլոր երկիրներու մէջ ընդհանրացած և գաղթականական հոսանք մը սկսած է. դեռ անցեալ շաբթու մասնաւոր շոգենաւ մը Ռուսիայէն 5000 թուրքեր բերաւ, Պոլսոյ առջև մի քանի ժամ մնալով Սև ծովու նաւահանգիստները փոխադրեց: Աւստրիայէն գրաւուած քաղաքներու թուրքերէն հազարաւորներ ոկսած են գաղթել, բացի կրեցաքի թուրքերէն ընթացիկ տարւոյս մէջ 8000էն աւելի թուրքեր գաղթած են Փոքր-Ասիոյ զանազան կողմերը: Բ. 'Իուռը այժմ իր ուշադրութիւնը դարձուցած է Պոսնա Հէրսէլի կողմերը, ուր պաշտօնապէս թուրք առաքեալներ կը զրկուին, տեղւոյն թուրք ժողովուրդը համոզել և Անաաօլ փոխադրելու համար:

Թուրք կառավարութիւնը այս քաղաքականութիւնը փութկոտութեամբ կը շարունակէ և պիտի շարունակէ մինչև որ ընդհ. իսլամութիւնը համախմբէ Փոքր-Ասիոյ ընդարձակ սահմանին մէջ,

## ԲԱՑ ՆԱՄԱԿ

Ս. Կ. Յ. Ժանկիւլեան

Ամիսներ առաջ գրած էիք «Շարժում»-ի մէջ Վանի սովետոյ ի նպաստ Աթէնքի մէջ տեղի ունեցած հանգանակութեան մը առթիւ, իրաւ է որ այդ հանգանակութիւնը արտագրեց 25 տրախմիսի (15 ֆր.) գումար մը, որը պահ տրուած էր Տիար Կարապետ Սէֆէրեանի քով, հանգանակուած այդ շնչին գումարը, իբր Աթէնքի հայ գաղթականութեան նուէրը Պատրիարքարան զրկելը ամօթ սեպեցին, ուստի ջանացին գումարին թիւը բաղմապատկել նոր հանգանակութեամբ, բայց դժբաղդաբար ապարդիւն մնաց: Նոյն միջոցին՝ պարբերաբար տեղս հասան մի քանի սովեալ գաղթականներ, որոնք կարօտ էին անմիջական օգնութեան, հանգանակութիւնը կազմող մարմինը ընդ որս «Միութիւն»-ի խմբագրութիւնը, նկատելով այդ աղքատիներու կարօտ վիճակը, ստիպեցին Տ. Սէֆէրեանը, որ իր քովի դրամովը անոնց օգնուի, գանձապահը նկատել տուաւ թէ չէր կրնար այդ բանը ընել ու ապագային պատասխանատու մնալ: զիսքը կը վստահացնեն իրենց վրայ առնելով ապագայ պատասխանատուութիւնը, և 25 տրախմիս կը բաժնուի երեք գաղթականներու, իւրաքանչիւրէն առնուելով ստացադրեր: Տ. Սէֆէրեան երբէք մեղաւոր չի կրնար ըլլալ, քանի որ այս կարգադրութեան մէջ ո՛չ հեղինակութիւն ունե-

ցած է և ո՛չ ալ սանթիմ մը եղծած, այլ կարգադրի մարմնոյն միջոցաւ ազգին սովեալներուն նպաստած, տարբերութիւնը սա է միայն որ նպաստը նկատելի է Վանեցի չէին:

Փափագելի է մեզ տեսնել որ աթէնքեանկայն հայերը, որոնք ստոր և գծուծ հաշիւներով, անձնական կիրքէ ու նախանձէ մղուած կը ջանան վարկաբեկ ընել Սէֆէրեան՝ մը գայն յանիրաւի ամբաստանելով, գէթ ունենան անոր անկեղծ ու խղճամիտ գործունէութեան մէկ քառորդը՝ դէպի հանրային գործը...

Վ. Յ. ՆԵՐՍԻՍԵԱՆՑ

## ԵՒՐՈՊԱԿԱՆ ՋՕՐԱՅ ԵՆԵՌՆԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԻ Ի ՉԻՆԱՍՏԱՆ

Լուսաւորեալ դարուս մէջ մարդկութեան վրայ ի գործ գրուած բարբարոսութիւններն իրենց գաղաթնակէտին հասած են վերջապէս: Այս անգամ բարբարոս կրօնավոր թուրքերը չեն, այլ քաղաքակիրթ, լուսամիտ և բարոյացիներն են, սրոնք քաղաքակրթութիւն կոչուած օյ ու ն պ ա զ ու թ ե մ մ ե կարգապահութիւնը վերահաստատելու պատրուակաւ խաղաղակեաց ժողովրդի մ. վրայ յարձակելով անոր իրաւունքները բռնի կորցել կուզէ: Թողունք մարդասէր Անգլիան. որ Թրանսվալի ոսկեհանքերուն տիրելու համար հանդարտաբարոյ, խաղաղասէր ալ մը ժողովրդի դէմ կատապի կուլ մղած՝ զայն բնաջինջ ընելու կը նկրտի: Այս ամենը կը պատահին Լա Հէյի հաշակաւոր միջազգային խաղաղութեան ժողովէն վերջ, որ նպատակ ունէր արգելել մարդասպանութեան կարգ մը ապօրինի օրկանները: Դեռ ամիս մը առաջ գերմանական թերթերը կը հրատարակէին իրենց զօրքերու եղեանական քաջագործութիւնները թէ՛ «կայսերական զօրաբանակի սպանները Բէքինի մօտ 72 չինասաանցիներ բռնելով իրենց ձեռքով իրենց գերզմանք պեղել տալէն յետոյ, ծաւերու վրայ կապած ու ամենքն ալ կարգաւ հրացանի բռնած են: Նոյն օրերը ռուս զօրքերն ալ 45 չիններ մէկ մէկու կապած քարիւղով ըստ կենդանւոյն այրած են: Վերջերս Բէթրպուսկի «Ռուսքի-Վէստնիկ» թերթը կը յիշէ թէ՛ «վերջապէս կառավարութիւնը խիստ հրամաններ տուաւ Զինաստանի ռուս զօրքերու հրամանատարաց, որ զաղբեցնեն իրենց այն վայրագութիւնները, զորս ի գործ կը դնեն չիններու վրայ: Նոյն թերթին զրկուած Բէքինէն թղթակցութիւն մը կը նկարագրէ ուրիշ գերման սպայի մը հետեւալ վայրագութիւնը. գերման զօրքերը քաղաքին մէջէն անցած առտին, տան մը պատուհանէն հրացանաձգութիւն կընէ տեղացի չին մը, որը գերման սպայ մը անմիջապէս ձերբակալելով, ոչխարի պէս կը մորթէ զայն և ապա քերթելով՝ մորթը չորցնելէ յետոյ չորս զոյգ ձեռնոցներ չինել կուտայ իրեն և բարեկամներուն համար:

## ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՉԷՆ

Մայր-Հայրենիքի մէջ թէև հացը աժան է, սակայն աղքատութիւնն ու չքաւորութիւնը—արդիւնք կոտորածներու և հալածանքներու— իր վերջին աստիճանին հասած է, սահմանները բոլորովին փակուած են հայերու համար և ճանապարհորդութիւնն ու հաղորդակցութիւնը բոլորովին դադրած է: Ծամբաները բացուելու յոյսն ալ չկայ, վեր-

ջապէս չունչ մը առնելու չեն թողուր: Թուրք տարրը՝ ինչպէս առաջ, ևս առաւել հիմա անհաշտ ու ոխակալ ընթացք մը բռնած է նամանաւանդ գիւղացիներուն հանդէպ: Գիւղերը դէպքերէն առաջ ինչ որ էր, աւելի վատթար վիճակի մէջ է այժմ, ամեն ինչ անշարժութեան, ճնշումի և յուսահատութեան մատնած են: Ասկէ անկէ փախստական երթացող, գացող ընամիքներ չատկան, իթէ թուրքը ճամբաները բաց ընէր. դարձեալ գաղթականութեան մեծ հոսանք մը պիտի թափէր դէպի այս կողմերը:

Գարնան Թիֆլիսի մէջ բանւորական մեծ գործադուլ եղաւ, գործարանատէրերը դահա-ցում տուին բանւորներուն, որ սկսան կրկին շարունակել իրենց գործերը: Թ.

## ԱՅՆ ԵՒ ԱՅԼԲ

— Սօֆիայի Մակեդոնական Բօմիթէն, փութկոտութեամբ կը գործէ գարնան կղանակին ընդհ. շարժում մը պատրաստելու համար: Սուլթանի թիկնապահներէն Արիֆ փաշա Սէլանիկ զրկուած է տեղական իշխանութեանց հետ գործակցելու Պուլկար յեղափոխականները հալածելու համար:

— Լոնտոնէն 'Իեկտ. 8 թուականով կը հեռագրեն թէ՛ հանրածանօթ Ժէօն-Թիւրք Օսման փաշա՝ մեկնել է քիւրտերը Սուլթանին դէմ գրգռելու նպատակաւ:

— Պօէրները նորանոր յաղթութիւններ կը տանին անգլիական զօրքերուն դէմ: Վերջին հաւաքիրները կը ծանուցանեն թէ՛ Գօլէմլիէրկը Պօէրներէն գրաւուել է ռազմա-միջերջերով և պաշարով: Լոնտոնի թերթերը խստիւ կը քննադատեն իբրաքիւր-ները, որ հեծելազօրաց թիւը չբազմապատկելով թողած է Պօէրներու գրաւել տոյգիսի կարևոր դիրք մը: Թրանսվալի քաջամարտիկ զօրքերու կրկնակի յաղթանակները Անգլիոյ դիւանագիտական չըջանակներու մէջ մտահոգութիւն կը պատճառէ:

## ՀԱՅԿԱԿԱՆ «ԲԱՐԹ ՓՕՍԹԱՆՆԵՐ

«Միութիւն»-ի նախորդ թուով ծանուցուած «Նշանակը Հայաստանեայց» նկարով Բարթ փոսթալները սպառած լինելով, երկրորդ անգամ լոյս տեսան՝ աւելի խնամքով պատրաստուած. արտասահմանի համար առանց զեղջի հատը 5 սանթիմ: Ամերիկայի համար յատկապէս զրկուած են պ. Յարութիւն Կիւլէսէրեանի ձեռամբ, կը ծախուի հատը մէկ սէնթի, փափաղողը կրնան գիմել առ Mr. Unan Goullassarian, 120. Monument str. Por Haud Ml u s. a.

Իսկ մեր հայրեն է H. Azadian, Poste restante Athenes: Իւրաքանչիւր երկրի լեզուով տրուած ապագրանքները հաղարէն պակաս չընդունուիր:

## ԳՐԻԳՈՐ ԱՐԱՊԵԱՆ

ԴԵՐՁԱԿ

Սրբապետ իրօքիս փողոց թիւ 1 Աթէնք  
Կը պատրաստէ չափի վրայ տեսակ հագուստներ, նրբաճաշակ և դիւրամատչելի գիւնեղով: Ամենէն խստապահանջն իսկ պօհ կրնայ մնալ, կը բաւէ որ գոնէ մի անգամ այցելէ հայ դերձակի գործատեղին:  
Անթերի ճշգրտապահութիւն: